ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771 www.court.am

ԴԴ-1 Ա-8450

«31» հոկտեմբերի 2025թ.

«Սորելլի» ՍՊԸ-Ի
տնօրեն Տ. Սիրեկանյանին
(հասցե՝ Գեղարքունիքի մ., գ. Աստղաձոր, Ազատամարտիկների 6/3)

Հարգելի պարոն Սիրեկանյան,

Դատական դեպարտամենտի և «Սորելլի» ՍՊԸ-ի միջև 15.09.2025 թվականին կնքված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-25/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ դրանով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանի ուժի մեջ մտնելու օրվանից (այն է՝ 16.09.2025թ.) սկսած 30 օրացույցային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով Ձեր 21.10.2025թ. թիվ Մ-17663 գրությունը (կցվում է) և այն հանգամանքը, որ 30.10.2025թ. դրությամբ չի իրականացվել Պայմանագրով նախատեսված մատակարարումը, հայտնում ենք, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը (այն է՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը)՝ Դատական դեպարտամենտը միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, որ.

- «Սորելլի» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

900005028106 գանձապետական հաշվին ուշացված 11 աշխատանքային օրվա համար փոխանցել 65,994 << դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետ) և 59,994 << դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետ)՝ վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելով Դատական դեպարտամենտ,

- մինչև ս.թ նոյեմբերի 10-ը պայմանագրի և որակավորման ապահովման գումարները (համապատասխանաբար՝ 1,648,800 << դրամ և 2,473,200 << դրամ) << ֆինանսների նախարարության կողմից բացված համապատասխանաբար 900005000758 և 900008000664 գանձապետական հաշիվներին փոխանցելու դեպքում չի կայացվի «Սորելլի» ՍՊԸ-ին գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշում (վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Դատական դեպարտամենտ),
- տույժերի, տուգանքների և ապահովումների գումարները վերը նշված ժամկետներում չվճարելու դեպքում Դատական դեպարտամենտը կձեռնարկի միջոցներ՝ դրանք գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատ՝. Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն
Հեռ.՝ /+37410/ 511-777, 511-617

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ
ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

«ՍՈՐԵԼԼԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Տ. ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՑ

«21» սեպտեմբեր 2025թ.

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Դատական Դեպարտամենտի և «Սորելլի» ՍՊ ընկերության միջև 15.09.2025 թվականին կնքված թիվ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-25/1 պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքների մատակարարման ժամկետների մասով առաջացել են մեր կողմից չնախատեսված խնդիրներ՝ ներմուծման երկրի գործընկեր կազմակերպության հետ պայմանագիրը լուծելու հանգամանքով պայմանավորված: Նշված ապրանքները ներկա պահին չեն կարող մատակարարվել:

Հայցում եմ Ձեզ ներողամտությունը:

«ՍՈՐԵԼԼԻ» ՍՊ Ընկերության տնօրեն ..... Տ. Սիրեկանյան
/ստորագրություն/

Կ.Տ

Մ 17663
21.10.25թ.